

Ս. ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔԸ ՀԻՄՆՈՎԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ

ԺԳ դարը ծանր երկունքով է սկսվում հայ ժողովրդի և Հայաստանյայց Եկեղեցու համար։

Հազիվ էր մեր երկիրը ազատվել սելջուկյան կործանարար արշավանքների մղձավանջից, կարճ դադարից հետո սկսվեցին մոնղոլական մահաբեր արշավանքները, որոնք ոչ միայն մեր երկրի առաջընթացը կանգնեցրին, այլև խաղաղության ծարավի մեր ժողովրդին, քանիերորդ անգամ լինելով, Գողգոթա բարձրացրին՝ խաչելու համար։ Ֆիզիկապես բնաջնջվող հայ ժողովրդին անհնար եղավ պարտադրել նաև մտավոր մահվան, և պատահական չէ, որ ԺԲ դարի վերջում և ԺԳ դարի սկզբում Հյուսիսային Հայաստանի և Հայոց Արևելից կողմանքի միավորմամբ ստեղծված վարչա-քաղաքական իշխանությունը, Զաքարյան իշխանական գայիսոնի ներքո, նոր թափ հաղորդեց հայ մշակութային կյանքին և հատկապես հայ ճարտարապետությանը։

ԺԳ դարի առաջին կեսից սկսած Հայաստանի ողջ տարածքով մեկ նորից լսվեց հայ շինարար ու կառուցող վարպետի մուրճի հուժկու զնգոցը։ Հայաստանի բոլոր շրջաններում, առանց բացառության, սկսվեց կառուցողական մի եռուզեռ։ Կառուցվում էին քաղաքացիական, զինվորական շինություններ, ինչպիսին էին Ամբերդի ամրոցը, Սանահնի կամուրջը, Թալինի և Սելիմի լեռնանցքի իջևան-քարվանսարաները։

Այս շրջանում մի նոր մակարդակի է բարձրանում եկեղեցաշինությունը։ ԺԳ դարի ժամանակահատվածին են վերաբերվում Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու նախագավիթը (1211 թ.), Հաղպատի Ս. Նշան եկեղեցու գավիթը (1216 թ.), նույն վանքի մեծ ժամատունը (1257 թ.), Կեչառիսի Կաթուղիկե եկեղեցին (1214 թ.)։ Հաղարծնի համալիրում Ս. Ստեփանոս եկեղեցին (1244 թ.) և նույն վանքի սեղանատունը (1248 թ.), որը համարվում է հայ միջնադարյան աշխարհիկ ճարտարապետության գլուխգործոցներից։ Նույն ժամանակահատվածին են վերաբերվում նաև Հառիճա հոյակերտ վանքը իր ժամատնով (1201 թ.), Հովհաննավանքը, Մակարավանքը, Գոշավանքը, Ամաղուի Նորավանքը և վերջապես՝ դարի ճարտարապետական հրաշքներից մեկը հանդիսացող Ս. Գեղարդա կամ Այրից վանքը, որը հայ եկեղեցական ճարտարապետության եզակի նմուշներից է։

Մատենագրական տվյալների համաձայն, նշանավոր այս մենաստանը հիմնադրվել է Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից, «Հաստատեալ ի Սբ. Լուսաւորչէն» և եղել է «Կացուրդ Սրբոյն ի Սահակայ» (Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Ժ դար)։

Վանքը հնում կոչվել է Այրից վանք՝ նույն տեղում եղած քարայրային շինու-



Ս. ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔԻ ՀԱՄԱՑՆԱՊԱՏԿԵՐԸ (1980 Թ.)



Ս. ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔԻ ՏԱՃԱՐԸ՝ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԳՄԲԵԹՈՎ (1980 Թ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

թյունների պատճառով: ԺԳ դարից կոչվել է Գեղարդա վանք՝ երկար դարեր խնամքով այնտեղ պահված համանուն սրբության անունով:

Ս. Գեղարդա վանքի ճարտարապետական համալիրը, վերգետնյա և ժայռափոր հանրահայտ սրբավայրերով, դասվում է հայ մշակույթի ամենանշանակալից ստեղծագործությունների շարքը: Համաշխարհային ճանաչման արժանացած շատ ճարտարապետական կոթողներ ստեղծող հայ ճարտարապետի միտքը այստեղ, Ս. Գեղարդա վանքում, թափանցել է ժայռերի խորքը, ստեղծելով ճարտարապետական մի համալիր, որտեղ հանճարեղ Գալձակն ու մյուս անանուն ճարտարապետները հրմտորեն կարողացել են օգտագործել նաև շրջապատող լեռնային գեղեցիկ բնությունը և դրանով իսկ հասել գեղարվեստական բարձր արտահայտչականության: Հոչակավոր այս մենաստանը, բացի աղոթքի և ուխտի վայր լինելուց, եղել է նաև մշակույթի ու դպրության կարևոր կենտրոն: Նվաճողների հերթափոխվող արշավանքները, իրար գերազանցող վայրագություններով, հսկայական հոգևոր մշակույթ ոչնչացրին մեր աշխարհում: Կողոպտված մեր վանքերի շարքում բացառություն չէր նաև Ս. Գեղարդա վանքը, որը համարվում էր «Սկիզբն և Մայր Վանորէից»: Այստեղ են կրթվել և գործել այնպիսի նվիրական անուններ, ինչպիսիք են Գրիգոր Գոգիկ ու Ստեփանոս Գառնեցի վարդապետները (Ը դար), Հովհաննես Գառնեցին, Մխիթար Այրիվանեցին (ԺԳ դար), Սիմեոն Բաբունապետն, Ստեփանոս Առինջեցին (ԺԵ դար) և ուրիշ վարդապետներ:

Հայոց աշխարհի դրախտանման մի անկյունում հրաշակերտված մեծահռչակ այս մենաստանը կառուցվել է 1215—1288 թթ. ընկած ժամանակաշրջանում, տեղական լավորակ, կարծր բազալտ քարից: Կառուցված է խաչաձև, առանց սյուների, չորս միանման և միակցուրդ որմնասյուներով, ամեն մի որմնասյունը եռակարգ հատվածաձև բաժանված: Գեղեցիկ կամարների վրա բարձրանում է սրածայր կաթուղիկեն: Տաճարի հարավային մուտքի վերևում տեղադրված արձանագրություններից իմանում ենք, որ վերջին նորոգումները Ս. Գեղարդա վանքում վերաբերվել են ԺԷ և ԺԹ դարերին:

Թիֆլիսաբնակ մեծահարուստ Չիթաղյան Սուլի ծախքով 1655 թ. նորոգվում է վանքի կաթուղիկեն. «Կամաւն Աստուծոյ ես Սուլէ որդի Թաղայի յազգէ Չիթաղեան, քաղաքէն Թիֆլիսու նորոգեցի զկաթուղիկէս յիշատակ ինձ և Թաղային և Բէկի Սուլդանին և ամուսնոյն իմոյ Դարեջանին և որդոյն իմոյ Ստեփաննոսին, եղբարցն իմոց Զալիին և Զաւրապին և ամուսնոյն իմոյ Գինադն և որդոյ Թաղայի և հանգուցելոցն ի Քրիստոս Պապքան և կախեցի արծաթէ կանթեղս Սուրբ Գեղարդին և ետու զխարճ նորա հանապազ վառ պահեսցեն» Թվ. ՌԾԴ (1655 թ.[1]):

24 տարի դիմացավ կաթուղիկեի նորոգումը, քանի որ 1679 թ. երկրաշարժը շատ բան հողին հավասարեցրեց մեր աշխարհում:

Տ. Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանը իր «Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ» հանրածանոթ գրքում, օգտվելով Նոր Բայազետի եկեղեցում պահվող ձեռագիր Ավետարաններից մեկի հիշատակարանից, մեջ է բերում ականատես հեղինակի հաստատումը 1679 թ. մեծ երկրաշարժի պատճառած վնասների մասին, որոնք հատկապես վերաբերվում են Գառնու ձորում գտնվող վանքերին. «Գեղարդի վանքն եւ Ախջոց վանքն եւ Ամենափրկչի վանքն (Հաւուց թառ) և Տրդատայ թախտըն եւ Խոր Վիրապայ Աստուածածնայ եկեղեցին հիմնայանակ աւերեցան»[2]: Վանքի նախանձախնդիր միաբանությունը, այնուամենայնիվ, կարողանում է մի կերպ բարվոք վիճակի բերել հաստատությունը մեծ շարժից հետո, մինչև որ 1855 թ. հնարավորություն է ստեղծվում տաճարի և ժամատան տանիքները վերանորոգելու:

1855 թ. վերանորոգման պատիվը պատկանում է նույն վանքի վանահայր Միքայել վարդապետ Զամոյանց Տփխիսեցուն. «Շնորհիւ ամենազօրին Աստուծոյ երրորդ անգամ նորոգեցան տանիքս Այրի վանիցս Սուրբ Գեղարդայ հանդերձ երկոքումբք գմբեթիւք, տրօք լուսաւորչական Հայոց ժողովրդականաց և բազմաջան աշխատութեամբ վանահօր Միքայէլ վարդապետ Զամօյեանց Տփխիսեցւոյ, որ և գնեաց յօգուտ վանիցս, իւրով սեփականութեամբ զԳողդ գիւղն ընդ միոյ ջրաղացի, թուին հայոց ՌԶԵ, յամի տեառն 1855»:

Շնայած 1855 թվականի նորոգումից անցել էր ընդամենը մեկ հարյուրամյակ, բայց ժամանակը իր քայքայիչ ու կործանարար գործը կատարել էր հայ մարդու ձեռքով հրաշակերտած ճարտարապետական այդ կոթողի նկատմամբ:

---

[1] Նորոգումներին վերաբերվող այս և հաջորդ արձանագրությունները վերգրել ենք Ս. Գեղարդա վանքի հարավ-արևելյան մուտքի պատի վրայից:

[2] Տես Գարեգին կթող. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 137:

Համաժողովրդական հոչակ վայելող այս սրբավայրը չէր կարող վրիպել ազգիս նորընտիր Հայրապետի ուշադրությունից: Ահա թե այդ մասին ինչ է գրում Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը Իր անդրանիկ ծրագրային կոնդակում. «Պիտի տքնինք ապա վերանորոգելու մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, ինչպիսիքն են Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն, Խոր վիրապը, Օշականը, Գեղարդը և ուրիշներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուները կհանդիսանան ու հոչակված տաճարները աղոթքի և ուխտի, և զմայլելի հուշարձանները հայ ճարտարապետության փառքի»:

Ս. Գեղարդա վանքի հիմնական նորոգման աշխատանքները, սակայն, հնարավոր չեղան անմիջապես և միանգամից սկսելու: Հաշվի առնելով 1855 թվականի նորոգման ժամանակ հարթ ծածկասալերի խարխլված վիճակը, անհրաժեշտ եղան հրատապ, մինչև արմատական վերանորոգումները, ժամանակավորապես թիթեղապատել Կաթուղիկե եկեղեցու և գավթի տանիքը, որ պահպանեց սրբավայրը հետագա քայքայումից: Ցինկապատ թիթեղը իր շլացուցիչ փայլով անհարիր էր ամբողջությամբ քարային հորինվածք ունեցող տաճարին և խանգարում էր նրա ճարտարապետական կերպարի ճիշտ ընկալմանը:

1960-ական թվականներին Վեհափառ Հայրապետի պատվերով Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովը պատրաստեց Ս. Գեղարդա վանքի վերանորոգման նախագիծը, որից հետո աստիճանաբար հնարավոր եղավ իրականություն դարձնել Նորին Սրբության ցանկություններից մեկը ևս, այն է՝ հիմնովին վերանորոգված տեսնելու հոգևոր ու պատմական փառավոր անցյալ ունեցող Ս. Գեղարդա վանքը:

Տաճարին սպառնում էին և՛ անձրևաջրերը, և՛ ստորգետնյա ջրերը, որոնց առկայությունը, ինչպես ցույց տվեցին նախնական գիտական ուսումնասիրությունները, Ս. Գեղարդա վանքի շրջանում բավական ուռատ էին: Հարկ եղավ հատուկ նախագծի պատրաստմամբ 99 մետր գետնուղի փորել, գտնել ջրաբեր բոլոր երակները, հատուկ միջոցներով հեռացնել դրանք, որոնք մըշտապես ներծծվում էին ժայռափոր տաճարների պատերից ներս և վտանգում նրանց հետագա գոյությունը: Շնորհիվ ընդգետնյա այդ կառույցի, հնարավոր եղավ վերջնականապես Ս. Գեղարդա վանքի ողջ համալիրը ձերբազատել ներքին խոնավությունից:

1978—80 թվականների ընթացքում լրիվ փոխվեցին եկեղեցու և ժամատան տանիքների ծածկասալերը, պահպանելով նախկին ձևերն ու տեսքը: Տաճարի գմբեթը ծածկվեց հարթ սալերով, հիմք ընդունելով գըմբեթի վրա պահպանված 20 սմ լայնքի ժապավենաձև հին գոտին: Քայքայված տուֆածածկ գմբեթի քարերը փոխվեցին բազալտով, շուրջ 90 քմ մակերեսով, որը նոր տեսք տվեց երկնալաց գմբեթին: Եկեղեցու և ժամատան հարթ տուֆածածկը փոխարինվեց նույնպես բազալտե ծածկասալերով, շուրջ 600 քմ: Հիմնովին փոխվեցին ժամատան ջրհորդանները բազալտե ձևավոր քարերով՝ շուրջ 35 քմ[3]:

Այս տարի տեղադրվեցին քանդակազարդ նոր դռները եկեղեցու մուտքի և ժամատան մուտքի, նախագծերովը ճարտարապետ Արծրուն Գալիկյանի և նկարիչ Գրիգոր Խանջյանի:

Հարավից, արևելքից և արևմուտքից Ս. Գեղարդա վանքը շրջափակված է զանազան տնտեսական և օժանդակ կառույցներով, որոնք նույնպես վերանորոգվեցին և բարեկարգվեցին: Այդ տնտեսական և օժանդակ կառույցները գալիս են պատմական անցյալից և տաճարի հետ միասին, որպես մի ճարտարապետական համալիր, առանձնահատուկ տեղ են գրավում Հայաստանում:

Իրականացվեց նաև վանքի ամբողջ բակի սալահատակումը: Միաբանական նախկին խցերը վերակառուցվեցին ժամանակակից պահանջներին համապատասխան:

Այսօր արդեն ամբողջապես իրականացվել են Ս. Գեղարդա վանքի ողջ համալիրի վերանորոգման աշխատանքները, որոնք նոր հմայք տվեցին հինավուրց մենաստանին: Վերանորոգված Ս. Գեղարդա պատմական սրբավայրը գալիք դարերին է հանձնվում որպես հայ կառուցողական մտքի հաղթանակներից մեկը:

ԵՂԻՇԵ ՔՀՆ. ՍԱՐԳՍՅԱՆ
վանահայր Ս. Գեղարդա վանքի

---

[3] Հոդվածը պատրաստելիս գործնական ու մասնագիտական օգնություն է ցույց տվել Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը, որին շնորհակալություն ենք հայտնում:



Ս. ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔԻ ՏԱՃԱՐԻ ՔԱՆԴԱԿԱՁԱՐԴ ՆՈՐ ԴՈՒՌԸ (1980 Թ.)